

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 7

Բնակչությանը հատկացվող վառելիքայտի ծավալը վերջին անգամ հաստատվել է 2013 թվականի նոյեմբերի 29-ին: Հենց այդ որոշմամբ էլ սահմանափակվել էր յուրաքանչյուր ընտանիքի հաշվով, վառելիքայտի հատկացվող լիմիտը կազմում էր 7 խորանարդ մետր: Այն ժամանակ վերոնշյալ որոշումը բողոքի ալիք առաջացրեց: Գյուղերի, առանձնապես բարձրալեռ տարածաշրջանների բնակիչները բողոքում էին, որ վերոնշյալ լիմիտը բավարար չէ: Դա հաստատում էին նաև բնապահպանության կազմակերպությունները, թեպետ վերջիններս հիմնական շեշտը դնում էին այլընտրանքային միջոցների օգտագործման վրա:

Հաշվարկների համաձայն, ելնելով տարածաշրջանների կլիմայական պայմաններից, ձմեռվա համար պահանջվող վառելանյութը կազմում էր 8-13 խորանարդ մետր: Ինչպես տեսնում եք, տարբերությունը բավականին նշանակալից է:

«Մեր շրջանում անտառներ չկան եւ լիմիտով հատկացված վառելիքայտը բերում ենք Բակուրիանիից կամ Ասպինձայից: Վառելիքայտի փոխադրումը մեծ դժվարությունների հետ է կապված: Անտառներում հիմնականում հատկացվում են դժվարհասանելի հատվածներում գտնվող ծառերը: Ստիպված լրացուցիչ ծախսեր ենք կատարում՝ ինչպես դրանց հատման, մանրացման, այնպես էլ փոխադրման համար»,- մեզ հետ զրույցում հայտարարեց նինոծմինդացի Գեորգ Սահակյանը եւ հավելեց, որ լիմիտով հատկացված 7 խորանարդ մետրը բավարար չէ եւ ստիպված լրացուցիչ գնումներ են կատարում՝ եռապատիկ, նույնիսկ քառապատիկ արժեքով: Բարձրալեռ տարածաշրջանների բնակիչների համար այլընտրանքային վառելանյութի տեսքով քննարկվում էր բնական գազի օգտագործման հնարավորությունը, թեպետ, ինչպես նշեցին Ախալքալաքիի մունիցիպալիտետում, որպես հիմնական վառելանյութ բնական գազի օգտագործման համար, հարկ է բնակարաններում իրականացնել որոշակի աշխատանքներ (անցկացնել ջեռուցման համակարգ), որոնք ներկայիս նյութական ծանր պայմաններում նշանակալի դժվարություն են ներկայացնում:

Մյուս կողմից, որքանով է իրատեսական լիմիտի ավելացման հեռանկարը: Մասնագետների պնդմամբ, վառելիքայտի լիմիտի կրկնապատկման համար համապատասխան ռեսուրսներ չկան: Նրանք հիմնական շեշտը դնում են այլընտրանքային աղբյուրների օգտագործման արդյունավետության բարձրացման վրա: Մասնավորապես, խոսքը վերաբերում է բնական գազի եւ թխիլի կճեպի օգտագործմանը: Թեպետ այդ հարցի կարգավորման համար անհրաժեշտ է միջգերատեսչական համաձայնեցված գործունեություն: Մասնագետների պնդմամբ, հարցը հնարավոր է կարգավորել, եթե գերատեսչությունների եւ բնակչության

միջեւ միջնորդի դերն ստանձնի էներգետիկայի նախարարությունը: Հակառակ դեպքում, միայն վառելանյութի լիմիտի ավելացմամբ, ինչը ինքնին հիմնախնդրային է, հարցը վերջնական կարգավորման հասցնել հնարավոր չէ: